Սայաթ Նովա

Դուն էն գլխեն իմաստուն իս

Էսպես Արութինի ասած,

Դուն է՛ն գըլխեն իմաստուն իս, խիլքդ հիմարին բաբ մի՛ անի,
Էրազումը տեսածի հիդ միզի մե հեսաբ մի՛ անի,
Յիս խոմ էն գըլխեն էրած իմ, նուրմեկանց քաբաբ մի՛ անի,
Թե վար, գիդիմ, բեզարիլ իս, ուրիշին սաբաբ մի՛ անի:

Չը կա քիզ պես հուքմի-հեքիմ, դուն Ռոստոմի Զալ, թաքա՛վուր,
Ասկըդ ասկերումը գոված՝ համ դո՛ւն իս գոզալ, թաքա՛վուր,
Թե էսանց էլ սուչ ունենամ՝ գլուխս արա՛ տալ, թաքա՛վուր,
Մըտիկ արա քու ստիղծողին՝ նահախ տիղ ղազաբ մի՛ անի:

Յարալուն հեքիմ էնդուր գուզե՝ դիղ տալու է, ցավ տալու չէ,
Քանի գուզե արբաբ ըլի՝ դուլը աղին դավ տալու չէ,
Դուն քու սիրտը իստակ պահե, յադի խոսկը ավտալու չէ,
Ասծու սերը կանչողի պես դըռնեմեդ ջուղաբ մի՛ անի:

Ամեն մարթ չի՛ կանա խըմի՝ իմ ջուրը ուրիշ ջըրեն է՛,
Ամեն մարթ չի՛ կանա կարթա՝ իմ գիրը ուրիշ գըրեն է.
Բունիաթս ավազ չիմանաս՝ քարափ է, քարուկըրեն է,
Սելավի պես՝ առանց ցամքիլ, դուն շուտով խարաբ մի՛ անի:

Քանի գուզե քամին տանե՝ ծովեմեն ավազ չի՛ պակսի.

Թեզուզ ըլիմ, թեզուզ չըլիմ՝ մեջլիսներուն սազ չի՛ պակսի,
Թե կու պակսիմ, քիզ կու պակսիմ՝ աշխարիս մե մազ չի՛ պակսի,
Սայաթ–Նովու գերեզմանը հինդ, հաբաշ, Արաբ մի՛ անի: